

## Հարցազրույց Փրոֆ. Ժիրայր Լիպարիտեանի հետ

**-Կարելի՞ է ձեր գրքի (Modern Armenia, People, Nation, State) միտք բանիմ  
ներկայացնել ամփոփ կերպով:**

-Կարելի է: Մեր ժողովուրդի պատմության նոր ժամանակաշրջանն է: Այսինքն, մոտաւորապէս 19րդ դարու կէսէն մինչեւ այսօր եղած մեծ փոփոխութիւններու գնահատականն է եւ քննական մօտեցումը: Անոր մէջ կը մտնէ Զարթօնքը, մեր քաղաքական կուսակցութիւններու հիմնադրութիւնը եւ շարունակականութիւնը, հայ-թուրք յարաբերութիւններու հարցը եւ ընդհանրապէս 20րդ դարու սկիզբը եւ, անշուշտ, Յեղասպանութեան հարցը, պատճառաբանութիւնը Յեղասպանութեան, Սփիւռքի կազմութիւնը, Սովետական Հայաստան, եւ անպայմանօրէն մեր վերջին 15 տարիներու երրորդ հանրապետութեան առջեւ դրուած հարցերը եւ մեր մօտեցումները՝ այս բոլորին: Հիմնական գաղափարը այն է, որ ինչպէս կարող ենք հասկնալ այդ պատմութիւնը՝ այնպիսի ձեւով, որ տեսնենք, թէ փոփոխութիւնը ինչպէս կը պատահի մեր ժողովուրդի մէջ. ըլլայ այդ հիմնարկութիւններու, մտայնութիւններու թէ քաղաքական մօտեցումներու: Եւ այդ փոփոխութեանց մէջ մեր մասնակցութիւնը ի՞նչ է: Մենք ընդհանրապէս մեր պատմութիւնը այնպիսի ձեւով կ'ընկալենք, որ բաներ կը պատահին մեզի: Բայց մենք ալ պատմութեան կերտման մասնակցած ենք: Մասնաւոր 19րդ դարէն ետք որոշած ենք մեր ձեւերով մեր ապագայի կերտման մասնակցիլ: Այս գաղափարը յաճախ յստակ չէ մեր պատմութեան մէջ: Այս գրքով եւ կը փորձեմ ցոյց տալ, որ մենք փորձած ենք մասնակցիլ: Սակայն այս գաղափարի երկրորդ հետեւութիւնը այն է, որ եթէ մենք մասնակցած ենք մեր ապագայի կերտման, ուրեմն պատասխանատուութիւն ունինք մեր ըսածի, ըրածի, չըրածի եւ չըսածի համար: Ուրեմն մենք միայն գոհ չենք, այլ նաեւ քաղաքական գործօն ենք: Ուրեմն այս երկու հիմնական գաղափարներն են: Եւ, ի վերջոյ, հարցադրումը, որ կը կարծեմ՝ կու գայ այս հատորէն, այն է, որ այս պատմութիւնը նկատի ունենալով, ի՞նչ ձեւով պետք է հասկնանք մեր հարցերը այսօր: Այսինքն, պատմութեան դասերը ի՞նչ են: Կարելի է շատ հակադիր դասեր ստանալ պատմութենէն: Այս գրքին մէջ փորձ մը կայ, որ քիչ մը աւելի լայն ձեւով տեսնենք մեր հարցերը եւ ոչ թէ նեղ, ներ-կուսակցական, միջ-կուսակցական, եկեղեցի-կուսակցութիւն, անոնց միջեւ մանր կռիւները եւ այլն, որոնք յաճախ կը տիրապետեն մեր մօտեցման՝ դէպի անցեալը: Ուրեմն այս գիրքը փորձ մըն է՝ քիչ մը հեռանալու, եւ լայնամտութեամբ դիտելու այդ հարցերը:

**-Հազարամեակներէ ի վեր կ'ապրէինք մեր հողերուն վրայ: 19րդ դարու երկրորդ կէսէն սկսեալ ազգակերտման Զարթօնք բոլորեցինք, գեղեցիկ երազներով ճամբայ ելանք, բայց, դժբախտաբար, այդ մէկը յանգեցավ մեր հողերու 90 տոկոս եւ մեր բնակչութեան 50 տոկոս կորստեան: Ի՞նչ էին մեր սխալները: Ովքե՞ր էին**

**պատասխանատուները եւ ի՞նչ դասեր կարելի է քաղել անկէ, մանաւանդ երբ նկատի ունենանք, որ Նոր Զարթօնք մը կ'ապրինք մեր պետականութեան վերականգնումով:**

-Անշուշտ, կարելի է եւ անհրաժեշտ է: Կարելի է նաեւ այդ հարցին պատասխան տալու համար մանրամասն դէպքերու մէջ մտնել, բայց չեմ ուզեր այդ մէկը ընել հիմա: Բայց կարելի է մէկ ընդհանուր դիտողութիւն ընել այդ ժամանակաշրջանի պատմութեան եւ անոր՝ մեր մասնակցութեան վրայ: Իմ եզրակացութիւնը այն է, որ մեր ղեկավարութիւնը, քաղաքական թէ կրօնական, այն մարդիկը, որ հայ ժողովուրդի անունով խօսեցան եւ քայլեր առին, թէ Օսմանեան կայսրութեան, թէ Ռուսաստանի եւ թէ միջազգային աստեաններու մէջ, ինչ որ անորոշութեան մէջ էին, թէ իրենց այդ մասնակցութեան նպատակը ի՞նչ էր: Այսինքն, strategy-ի յստակութեան պակաս մը կար: Այսինքն, մենք զենք առինք Օսմանեան կայսրութեան դէմ, ինքնապաշտպանութեան համար, պետութի՞ւնը տապալելու համար եւ ուրիշ տեսակ պետութի՞ւն հաստատելու համար, թէ՞ եւրոպական միջամտութիւն ձեռք ձգելու համար:

Ասոնցմէ իւրաքանչիւրը տարբեր strategy էր, բայց մեր ղեկավարութիւնը այն ատեն մէկէն միւսը անցաւ եւ իւրաքանչիւրի պարագային՝ յաճախ չափազանցուած ակնկալութիւններով: Թերագնահատեց Օսմանեան կայսրութեան կարողութիւնը: Գերագնահատեց Եւրոպայի հետաքրքրութիւնը, մարդկայնասիրութիւնը եւ հայասիրութիւնը: Եւ ատոր համար ալ յաճախ այնպիսի կացութիւններու մէջ մնացինք, որ այլեւս այլընտրանք չունէինք: Եւ հիմա պետք է ըսեմ, որ մօտաւորապէս կան մտածողներ, որոնք նոյն մտքին են, թէ Եւրոպայէն ի՞նչ կը սպասենք, Ռուսաստանէն ի՞նչ կը սպասենք, կամ մեր հակառակորդները որքա՞ն տկար են եւ այլն: Այդ հաշուարկները կարծես այն ատեն սխալ ըրինք. սխալներ ըրինք առնուազն մեր հաշուարկներուն մէջ եւ հիմա նորէն մեր ուժերու գերագնահատում կայ, հակառակորդի թերագնահատում կայ, Եւրոպայի, Ռուսաստանի կամ Ամերիկայի վրայ յոյսեր դնելու քիչ մը փափաքը, սերը կայ: Բայց իրականութիւնները ի՞նչ են, յաճախ չենք ուզեր տեսնել: Իւրաքանչիւր պետութիւն իր շահերով կ'երթայ եւ այդ շահերու հաշուարկը աւելի ճիշդ պետք է ըլլայ: Մեր ուժերու հաշուարկը աւելի ճիշդ պետք է ըլլայ: Այլապէս նորէն սխալներ կ'ընենք:

**-Փոքր ժողովուրդներու պարագային, իրենց ուժը իրենց համերաշխութեան մէջ է: Որքան համերաշխ է այդ ժողովուրդը, այնքան աւելի դժուար կ'ըլլայ օտարներու համար կարենալ օգտագործել զիրենք: Իսկ որքան պառակտուած է, օտարներ կրնան այդ պառակտուածութիւնը օգտագործել իրենց շահերուն համար: Որքանո՞վ ճիշտ կը նկատէք դուք այս միտքը մեր ժողովուրդին համար:**

-Այս հատորին գլխաւոր թեմաներէն մէկն ալ այդ է, եւ պատմութեան մէջ ալ այդ մէկը կը տեսնենք: Ընդհանուր սկզբունքը շատ ճիշտ է: Որքան միացած ես, այնքան աւելի դժուար է քեզ պառակտելը: Բայց ընդհանրապէս նաեւ մեր պատմութեան մէջ հարց ունեցած ենք, թէ դժուարութիւն ունինք միացած գործելու: Սա մէկ կողմէ

նորմալ է, որովհետեւ այնքան հարցեր ունինք, այնքան մեծ են մեր խնդիրները, որ բնական է, որ մենք տարբեր մտածենք իրարմէ: Հարցը այն է, որ երբ տարբեր կը մտածենք, ի՞նչ մեքանիզմ ունինք որով մենք կրնանք եզրակացութեան մը գալ: Մենք երբ պետութիւն չենք ունեցած, այդ մեքանիզմը դժուար է եղած: Ինչպէ՞ս կրնանք միասին գործել: Իրար բռնանալով, համոզելով թէ ի՞նչ ձեւով: Երբ պետութիւն կայ, պետութիւնը ինք իր ձեւը ունի ըսելու, որ այս պետութեան կարծիքը սա է: Նախընտրաբար պետութիւնը ժողովրդավարական է, հետեւաբար ընտրուած իշխանութիւնները իրաւունք ունին ըսելու, որ մենք սա կը ներկայացնենք: Բայց Սփիւռքը չունի նման կառոյց: Չենք կրցած նոյնիսկ մօտենալ նման կառոյց ստեղծելու, որ սփիւռքեան կազմակերպութիւններ քով քովի գան ու նոյնիսկ եթէ ամէն բանի չհամաձայնին, առնուազն օրակարգի վրայ համաձայնին, եւ համաձայնին՝ ինչպէ՞ս չհամաձայնուիլ այն հարցերու շուրջ, ուր անհամաձայնութիւն կը տիրէ: Դժբախտաբար, այդ մօտեցումը ունեցած չենք պատմութեան մէջ: Երեւակայեցէք Արշակունիներու թագաւորութեան ատեն, իշխաններ եւ կաթողիկոսներ եղած են թագաւորին դէմ եւ թագաւորը՝ իշխաններուն դէմ: Իւրաքանչիւրը կը կարծէր, որ ինքը ճիշտ է ու յաճախ ունէին լուրջ հարցեր իրար հետ ու անմիջապէս, որ այդ հարցերը կը ծագէին, դուրսի ուժերը կը շահագործէին այդ ներքին պառակտումները: Այդ հարցը մինչեւ այսօր չենք կրցած լուծել: Բագրատունիներու ատեն ոչ միայն իշխանները թագաւորին դէմ գացին, այլ նաեւ իրենք զիրենք թագաւոր հռչակեցին: Եւ ոչ միայն թագաւոր հռչակեցին, այլ իւրաքանչիւրը իր կաթողիկոսը բերաւ: Պատմութեան մէջ այդ կրկնուած բաները մենք կը շարունակենք ուրիշ ձեւերով կրկնել այսօր: Իւրաքանչիւր կուսակցութիւն, իւրաքանչիւր խումբ հաւատք ունի, որ ինքն է իսկականը: Որքան ատեն, որ մենք մեր քաղաքականութիւնը կը շփոթենք մեր identity-ին (ինքնութեան) հետ, շատ դժուար կ'ըլլայ քաղաքականութիւն վարել: Որովհետեւ իմ իմբակը identity-ն է, օրինակ՝ դաշնակցական եմ, հնչակեան եմ, ռամկավար եմ, էջմիածնական եմ, անթիլիասական եմ, իւրաքանչիւրը իմ էութիւնս է, ես ինչպէ՞ս կրնամ բանակցութեան նիւթ դարձնել իմ էութիւնը: Բայց սա ոչ թէ քաղաքական, այլ հոգեբանական հարցեր են: Եթէ քաղաքականութիւն ըլլար, այն ատեն կարելի է նստիլ, բանակցիլ եւ առեւտուր ընել եւ ձեւի մը հասնիլ, չեմ ըսեր միութեան գաղափարին, այլ առնուազն հիմնական համագործակցութեան գաղափարին: Եւ ասոր հետ կու գայ նաեւ Սփիւռք-Հայաստան յարաբերութիւնները, որ ի՞նչ է դերը Սփիւռքի եւ Հայաստանի: Ատիկա եւ մեր շատ մը դժուար հարցերը կը ծածկենք մեծ բառերու տակ: Սէր, միաբանութիւն, հայրենասիրութիւն եւ այլն: Այդ մեծ բառերը, իտէպական մօտեցումները արգելք կ'ըլլան, որ մենք իրական դժուարութիւնները դնենք սեղանին վրայ եւ ըսենք՝ այս է դժուարութիւնը, եւ փորձենք լուծել: Ես կը կարծեմ, որ կրկնութիւն կայ պատմութեան մէջ, որ ահաւոր բան է, որ եթէ չկարողանանք առնուազն հասկնալ եւ ընդունիլ, պիտի շարունակենք նոյն թերի մօտեցումները:

-Դուք մեծ գաղափարներու մասին նշում ըրիք: Այստեղ կ'ուզեմ հարցը դնել ազգային գաղափարախօսութեան: Բաւական չարչրկուած արտայայտութիւն մըն է ասիկա: Կ'ուզեի իմանալ ձեր կարծիքը այս մասին, թէ ի՞նչ կը հասկնանք ազգային գաղափարախօսութիւն ըսելով: Կարգ մը մարդոց համար ասիկա ֆաշիզմ է, ուրիշներու համար երազային բառն է: Ի՞նչ կը նշանակէ ձեզի համար:

-Ես ոչինչ չեմ հասկնար այդ բառէն: Այդ բառը ինծի ոչինչ չըսեր: Քիչ մը կը վախեցնէ: Ազգային գաղափարախօսութիւն, այսինքն մտածելու ձեւ մը, որը ընդունելի է բոլոր ազգին: Հիմա ո՞րն է այդ մէկը, կարելի է ընդհանուր ձեւով ըսել, որ Հայաստանը կարելոր է, պատմութիւնը կարելոր է, բայց ատոնք քաղաքականութեան strategy չեն ներկայացներ: Եթէ մեր ազգի, պետականութեան առջեւ մեծ հարցեր կան, այդ ազգային ո՞ր գաղափարախօսութիւնն է, որ պիտի ընդունուի բոլորէն: Պետութիւնը չի կրնար ազգային գաղափարախօսութիւն ունենալ: Կոմունիզմի օրով ունեցանք ազգային գաղափարախօսութիւն: Գո՞հ էինք անկէ: Վստահ չեմ: Պետութեան, ընկերութեան, հասարակութեան հիմքը գաղափարախօսութիւնը չէ այնքան, որքան մեքանիզմը՝ իրար հետ հարցերը լուծելու: Եւ ասիկա ասելի կարելոր է, քան այսօր այս քաղաքականութիւնը, վաղը միւս քաղաքականութիւնը:

Երբ ազգային գաղափարախօսութեան կ'երթանք, այն ատեն կը նշանակէ, որ մեկ հոգիի կամ մեկ խումբի, մեկ կուսակցութեան, մեկ եկեղեցիի մտածածը պիտի պարտադրուի բոլորին: Ուրիշ ձեւ չկայ ազգային գաղափարախօսութեան: Այլապէս Դաշնակցութիւնը ունի իրը, Հնչակեանը ունի իրը, Ռամկավարը, չեզոքը եւ դեռ ուրիշ խումբեր, իւրաքանչիւրը իրը ազգային կը նկատէ: Հիմա որո՞ւն է, որ ազգային ըլլալու համար պիտի պարտադրուի միւսներուն վրայ եւ ի՞նչ մեքանիզմով: Պետութիւններու մէջ, եթէ ժողովրդավարական են, իւրաքանչիւրը իրը կը ներկայացնէ, եւ ժողովուրդը կ'ընտրէ եւ կ'ըսէ. 54 տոկոսով այս մարդիկն են պետութեան ղեկավարութիւնը, եւ ընդդիմադրութեան մեքանիզմը սա է: Այլապէս կը դառնայ տիքթաթուրայի ձեւ, որը ունեցած ենք անցեալին եւ չեմ կարծեր շատ գոհ մնացած ենք:

**-Այստեղ կ'ուզեմ անդրադառնալ անհատի դերին՝ հաւաքականութեան մէջ: Լուսահոգի Վազգէն Սարգսեանի բառերով՝ «լինում են պահեր, երբ մի քանի մարդուց է կախուած ժողովուրդի ճակատագիրը»: Ի՞նչ է ձեր կարծիքը այս մասին:**

-Հաւանաբար, բաւական ճշմարտութիւն կայ այդ հարցին մէջ: Երբ պետութեան մէջ աշխատած մարդ է, ինչպէս Վազգէնն էր, ինք տեսած է, որ այդ պահերը կու գան, ուր որոշում մը պիտի առնուի, այս կամ այն: Եւ այդ որոշումը առնողները, ի վերջոյ, 3, 4, 10 հոգի են կամ 15 հոգի են: Եղած եմ այդ կացութիւններու մէջ, անշուշտ, երբ Հայաստան կ'աշխատէի: Սակայն պիտի մտածենք նաեւ, որ այդ մարդիկը արդիւնքն են այդ ժողովուրդին: Իրենց մտայնութիւնը, վերլուծելու կարողութիւնը եւ ձեւը, եւ դատողութիւնը, հիմնուած կ'ըլլայ ժողովուրդի փորձառութեան վրայ, պատմութեան հասկացողութեան վրայ: Բայց նաեւ յստակ է

այնտեղ, որ երբեմն այդ պահերուն այդ քաղաքական երեւակայութիւնը պէտք է՝ կարողանալ լաւ հասկնալու համար, թէ ի՞նչ են այլընտրանքները, իւրաքանչիւրի հետեւանքները ի՞նչ են, ռիսքերը ի՞նչ են: Ուրեմն ձեռով մը այդ մարդիկը այդտեղ են, որովհետեւ մաս կը կազմեն այդ ժողովուրդին: Բայց միւս կողմէ ճիշտ է, որ երբեմն ստիպուած ես դուն քեզ գերազանցել այդ կացութիւններու մէջ, եւ Վազգէնի խօսքը աստոր կը վերաբերի, որովհետեւ եթէ տարբեր մարդիկ ըլլային, կրնայ ըլլալ տարբեր որոշման գային:

**-Այս ձեր բացատրածը նկատի ունենալով, ի՞նչ կը խորհիք, երբ այդ մէկը կը համեմատէք Հոկտեմբեր 27-ի աղէտի հետ: Ինչպիսի՞ անդրադարձ ունեցաւ այդ մէկը:**

-Այո, բաւական կարեւոր կը նկատեմ այդ դժբախտութիւնը, որովհետեւ տակաւին պետականութիւնը այնքան մը ամրացած չէ, որ որոշում առնելու process-ները իրենց կիսանկախութիւնը ունենան, ինչպէս Ամերիկայի պէս տեղ մը, ուր ով որ ալ նախագահ ըլլայ, ձեռք կայ: Տակաւին անհատներու կարեւորութիւնը աւելի մեծ է, քան պէտք է ըլլայ պետութեան մը մէջ: Բայց այդ բնական է, որովհետեւ պետութիւնը նոր է: Այն ատեն Վազգէն Սարգսեանի եւ Կարէն Դեմիրճեանի խորհրդարանական ընտրութիւններու մէջ յաղթանակը, կը կարծեմ, որ քաղաքական զարգացման կարեւոր փուլ մըն էր: Ուրեմն հետաքրքրական հաւասարակշռութիւն մը կը ստեղծէր նախագահին հետ: Շատ մը երեւոյթներ եւ շահեր կը պաշտպանուէին այս երկուսի կողմէ, եւ ուրիշներ նախագահին կողմէ: Ուրեմն այնտեղ հաւասարակշռութիւն մը, քաղաքական, բնական եւ տրամաբանական եւ առողջ հակադրութիւնը կը ստեղծուէր, ուր իշխանութեան տարբեր թելերը տարբեր բան կը ներկայացնէին: Հայաստանի Սահմանադրութիւնը բաւական առողջ Սահմանադրութիւն է այդ ձեռով: Այսինքն ժողովուրդը կ'ընտրէ ուղղակի եւ նախագահը, այսինքն գործադիր իշխանութիւնը եւ խորհրդարանը՝ Ազգային ժողովը: Ժողովուրդը նաեւ կրնայ ըսել, որ նախագահը սրան կ'ուզեմ, Ազգային ժողովը՝ ընդդիմադիրներուն, որպէս զի բոլոր շահերը ներկայացուին: Ուրիշ ատեն նոյն կուսակցութիւնէն կրնայ ընտրել՝ ըսելով որ սա է: Ուրեմն շատ լաւ զարգացում էր, որ այդ ձեռով եղաւ եւ բաւական ուժեր իշխանութեան եկան, տարբեր ձեռով մտածող ուժեր, եւ այդ էր, որ կտրուեցաւ: Քաղաքական Institution-ներու զարգացման համար շատ կարեւոր էր այդ ընտրութիւնը իմ կարծիքովս, որովհետեւ այդ հակասութիւնը երբեմն առողջ է եւ մեր պետականութեան զարգացման համար շատ լաւ էր: Բայց երբ այսպէս կարգէ դուրս, ոչ թէ քուէներով դուրս դրուեցան, այլ պարզապէս սպաննուեցան այդ մարդիկը, առաւել մի քանի հոգի կարող մարդիկ, որոնք պետական փորձառութիւն ունէին, այդ քաղաքական զարգացումը կասեցման գնաց եւ ոչ բնական, ոչ առողջ մթնոլորտ մը ստեղծուեցաւ, մանաւանդ որ տակաւին իսկապէս չենք գիտեր, թէ այդ ոճրագործներու ետին ո՞վ էր եւ կամ ի՞նչ ուժեր կային:

-Հայաստանի անկախացումն անմիջապես ետք, «Մասիս» շաբաթաթերթի Յունուար 18, 1992-ի թիով յօդուած մը հրատարակած էի, ուր մի քանի հարցումներ կ' ուղղէի անկախութեան հետ կապուած: Ատոնցմէ կ' ուզեմ այստեղ յիշել մէկը:

Արեւմտեան Հայաստանի ազատագրման պայքարը ղեկավարուեցաւ ընդհանրապէս Արեւելեան Հայաստան ծնած ու մեծցած մտաւորականութեան կողմէ: 1918-1920-ի Հայաստանի (նաեւ կոչուած՝ Երեւանի) Հանրապետութիւնը ղեկավարուեցաւ Թիֆլիսի մէջ հասակ նետած կամ կայք հաստատած մտաւորականութեան կողմէ: Երկու պարագաներուն ալ մեր ժողովուրդի ակնկալութիւնները չարդարացուեցան:

Ներկայի հանրապետութեան ղեկավարութիւնը սնած է իր ոտքերուն տակի հողէն եւ շուրջի ժողովուրդէն: Հարուստ է նաեւ անցեալի փորձառութեանց դասերով: Վերջապէս պիտի իրականանա՞ն մեր ակնկալութիւնները:

-Կրնամ ըսել, որ բաւական կարեւորութիւն ունեցող հարցերու մէջ յաջողեցաւ այդ ղեկավարութիւնը: Այսինքն, Հայաստանի անկախացումը եղաւ, եւ եղաւ խաղաղ: Ղարաբաղի պատերազմը առայժմ վերջացաւ, եւ վստահ չեմ գիտեր եթէ վերջացած է, բայց առնուազն այս հանգրուանը վերջացաւ հայկական ուժերու յաղթանակով: Կարելի եղաւ ստեղծել Սահմանադրութիւն, որը թէեւ սկիզբը մեծ ընդդիմադրութիւն ստեղծեց, բայց հիմա կը տեսնենք, որ իսկապէս հարցերը լուծող սահմանադրութիւն է: Ըսել չէ՝ կատարեալ է, բայց առնուազն հարցերը լուծող է: Պետական կառոյցները բաւական լաւ են Հայաստանի մէջ. չեմ ըսեր՝ կատարեալ են, լրիւ գործող են եւ ամենալաւ ձեւով կը գործեն, բայց կան, մանաւանդ համեմատած Վրաստանին, Ազրպէյճանին եւ կամ շատ մը ուրիշ տեղերու, տակաւին ինչ որ հասկացողութիւն կայ պետական կառոյցներու, պետական ծառայութեան՝ հակառակ անոր, որ թէեւ շատ մարդիկ ինչեր կ' ըսեն, եւ կը կարծեն, որ ընդհանուր առմամբ այդ պետութեան կառոյցները, այսինքն՝ Ազգային ժողովն է, բանակն է, ոստիկանութիւնն է, այս է, այն է, կարելի է կայացած համարել: Այդ մարդիկ աշխատած են: Եթէ այդ պետութիւնը եւ պետական պաշտօնեաները բոլորը ըլլային այն, ինչ որ որոշ մարդիկ կ' ըսէին կամ կ' ըսեն, կարո՞ղ էր այդ պետութիւնը տակաւին մնար եւ պատերազմ յաղթեր, կարողանա՞ր տնտեսական բարեփոխումները ընել, կարողանար քաղաքական բարեփոխումները ընել. նորէն կ' ըսեմ այնտեղ չենք, որ պետք է ըլլայինք, բայց շատ մը կարեւոր հարցերու մէջ այդ յառաջդիմութիւնը եղաւ: Կարելի եղաւ նաեւ վերանայիլ այդ մեր աւանդական մօտեցումները Թուրքիայի նկատմամբ եւ հակառակ իշխանափոխութեան Հայաստանի մէջ, Տէր Պետրոսեանէն Քոչարեան, հիմնական սկզբունքները ընդունուեցան, որ մենք մեր հարեւաններուն հետ պետք է լեզու գտնենք, մեր անվտանգութեան հիմնական ապահովեցուցիչը այդ է, եւ մենք մեր հարցերը պիտի լուծենք մեր հարեւաններուն հետ: Հիմա տարբերութիւն կայ, թէ որքան, ի՞նչ ձեւով, ո՞ր հարցերը այսօր կը դրուին, ո՞ր հարցերը՝ վաղը, բայց կը կարծեմ, որ մենք կարողացանք այդ բեկումը բերել աւանդական մտածելակերպին մէջ, որ մենք չենք կրնար անկախ մնալ, որ մենք կը ջարդուինք, եթէ անկախանանք,

որ մենք ստիպուած ենք ուրիշներու վստահիլ: Գիտե՞ք, հարցը այն է, որ ի՞նչ քաղաքականութիւն կը վարես, որպէս զի այդ կարանթիաները շատացնես: Ես նախորդ գրքիս մէջ գրած եմ՝ մանաւանդ արտաքին եւ անվտանգութեան քաղաքականութեան հիմնական նպատակը պէտք է ըլլայ **այլընտրանքներ ստեղծել**: Այլապէս ուրիշը կը պարտադրէ, յետոյ դուն գոհը կը դառնաս ու կ' երթաս մէկ դժգոհութեան առարկայ եւս կ' ունենաս, մէկ պատճառ եւս կ' ունենաս այպանելու Եւրոպան, Ամերիկան եւ Ռուսաստանը, բայց արդէն կորսնցնելիքը կորսնցուցած ես: Օրինակի համար՝ մեր առաջ այսօր դրուած ամենամեծ հարցը, որ ձախողութիւն է, այդ ալ Ղարաբաղի հարցը չկարենալ լուծելն է: Մարդիկ կան, կը մտածեն՝ արդէն լուծուած է, եւ երկիրը նորմալ վիճակի կ' երթայ: Իսկ իմ անձնական կարծիքը այն է, որ այդ հարցը չէ լուծուած եւ պէտք է լուծուի: Եթէ մենք չի լուծենք, ուրիշը պիտի լուծէ: Եւ եթէ մենք լուծենք, մենք կրնանք տեսնել, թէ իսկապէս որոնք են այն զիջումները, փոխ-զիջումները, որ մենք կրնանք տալ դիմացինին՝ առանց մեր հիմնական շահերը վնասելու, եւ պահանջել այն բաները, որ մեզ համար հիմնական են: Մենք եթէ ընենք այդ գործը, աւելի քիչ վնասով դուրս կու գանք: Եթէ չընենք, ի վերջոյ, ուրիշը պիտի պարտադրէ: Մեր պատմութեան մէջ մի քանի բան կայ, որ շատ յստակ է: Եթէ առնէք մեր պետականութեան պատմութիւնը, Արտաշէսեաններէն Արշակունիները, ի՞նչն է, որ կը փոխուի Արշակունիներէն յետոյ: Կը փոխուի կեդրոնական իշխանութեան պակասը, եւ կը փոխուի ուրիշ բան: Բագրատունիներու շրջանին կը սկսի մեծ թիւով արտագաղթը՝ սկսելով Արծրունի թագաւորներէն, որոնք իրենք թողուցին Վասպուրականը եւ, ըստ պատմագրին, 100,000 հայութեամբ գացին Սեբաստիա եւ այլն: Այդ պարպուիլը, ի վերջոյ, շարունակուեցաւ Սելճուքներու եւ Մոնկոլներու ատեն, յետոյ մեծ թափ առաւ նորէն 19րդ դարուն: Ասոնք նախապայմաններն են երկու մեծ հարցերու մեր պատմութեան մէջ: Մեր պետականութեան կորուստին, երկրորդը՝ demographic փոփոխութեան: Այսինքն՝ մենք մեծամասնութիւն ըլլալէ դադրեցանք մեր հողերուն վրայ: Այս երկուքը հիմնական, պատմական պատճառներն են Ցեղասպանութեան: Եթէ մենք մեծամասնութիւն ըլլայինք այնտեղ, այդ Ցեղասպանութիւնը ոչ այնքան դյուրին կ' ըլլար, ոչ ալ այնքան արդիւնաւէտ՝ թուրք պետութեան համար: Եւ տեսէք, թէ ինչպէս պարպուեցաւ այդ երկիրը 19րդ դարու վերջը: Երբ կարդանք Հնչակեան, Դաշնակցական կուսակցութիւններու թերթերը՝ Հնչակն ու Դրօշակը, պիտի տեսնէք, որ այդտեղ 90 տոկոսը կը վերաբերի այդ հայութեան հողաթափման: Ամենամեծ մտահոգութիւնը այդ էր: Գիւղերը կ'երթանք, տղամարդ չէ մնացած: Սա 19րդ դարու վերջն է, որմէ յետոյ շատ դիւրին է Ցեղասպանութիւնը ընելը: Իսկ այսօր, երբ Հայաստանը կը պարպուի, տակաւին կը մտածենք, որ նորմալ է: Հիմա կրնա՞յ ըլլալ, որ 2.2 միլիոննոց Հայաստանի Հանրապետութեան բանակը կրնայ նոյն ուժը ունենալ, ինչ որ 3.7 միլիոնն էր: Սա պարզ բան է, չէ՞: Կամ կրնա՞յ տնտեսութիւնը նոյնքան ուժեղ ըլլալ: Եւ տկար տնտեսութեամբ, տկար ժողովուրդով մենք ինչպէ՞ս տակաւին այնքան երազներ ունեցող մարդիկ ունինք: Ես կը կարծեմ, որ այսօր այդ պետութիւնը ուժեղացնելը,

տնտեսությունը ուժեղացնելը ամենէն կարեւոր գործն է: Ես տակաւին այն կարծիքին եմ ու աւելի հաւատացած եմ այսօր, քան 7 տարիներ առաջ, երբոր Հայաստան կ'աշխատէի եւ անկէ ետք առիթ ունեցած եմ մտածելու, իմ կարծիքով՝ այսօր աւելի վտանգաւոր է այդ կացութիւնը, որովհետեւ եթէ մենք նոյնիսկ նոյնը կը մնանք, հարեւանները կը փոխուին: Միջազգային կացութիւնը այնպէս փոխուած է 10 տարի առաջուրնէ, երբոր զինադադարը հաստատուեցաւ: Ազրպէյճանը այնպէս փոխուած է, Վրաստանը կը փոխուի, միջազգային յարաբերութիւնները եւ շահերը կը փոխուին, իսկ մենք մնացած ենք նոյնը, բան չենք փոխեր: Ես կը կարծեմ, որ նոյնիսկ եթէ մենք ետ գացած չըլլանք, միւսները այնպէս կը փոխուին, որ արդիւնքը նոյնն է, եւ այլեւս մենք շատ մը երեւոյթներէ դուրս մնացած ենք որպէս երկիր: Հաղորդակցութիւնները, երկաթ գիծերը չեն գործեր, 4 հարեւան ունինք, որոնցմէ երկուքին հետ յարաբերութիւններ չունինք եւ որոնցմէ մէկուն հետ թեքնիքապէս պատերազմի մէջ ենք: Մեր կախուածութիւնը շատ է եւ այլընտրանքները կը պակսին ժամանակի ընթացքին, որմէ յետոյ մեզ որեւէ բան պարտադրելը կը դիւրանայ: Անոր համար իմ մտահոգութիւնս միշտ այդ ընդհանուր երեւոյթներն են, որոնք մեզ այնտեղ կը հասցնեն, որ երբ օտարը գայ եւ ուզէ բան մը պարտադրել, Ամերիկացին է, թէ Ռուսը, թէ Եւրոպան, մենք չունինք ձեռք դիմադրելու, որովհետեւ թոյլ տուած ենք, որ ժամանակը անցնի եւ ժամանակին մեր ճիշտ որոշումները չենք առած:

**-Դուք ձեր պատասխանին մէջ զանազան հարցերու անդրադարձաք եւ ես պիտի ուզէի մի քանի հարց մասնաւորել: Օրինակի համար՝ ըսիք, թէ երբ մենք մեր հարցերը չի լուծենք, օտարը իր լուծումը պիտի պարտադրէ: Կարելի՞ է բաղդատական մը ընել 1915-ին հետ, երբ Պերլին-Պաղտատ երկաթգծի հարցը կար եւ բնականաբար Գեմանիան եւ Եւրոպական այլ երկիրներ իրենց շահերը կը հետապնդէին, եւ մենք անոնց ծրագիրներուն զոհ գացինք: Այսօր Պաքու-Ճեյհան քարիւղատարը կայ: Երեւոյթները նոյնն են կարծէք, բայց մենք որքանով պատրաստուած ենք այդ նոյն հարցերուն այս անգամ տարբեր պատասխան տալու եւ ոտքի տակ չերթալու:**

-Ես վստահ չեմ, որ այս զուգահեռը 100 տոկոսով ճիշդ է, բայց դիտողութիւնդ ճիշդ է ընդհանրապէս, որ իսկապէս մտածելակերպի հարց է, թէ մենք ինչպէ՞ս կը գնահատենք, ի՞նչ հիման վրայ դատողութիւններ կ'ընենք մեր առջեւ դրուած հարցերուն: Օրինակի համար, նաւթամուղը, եթէ Հայաստանէ անցնէր, լա՞ւ բան էր թէ վատ: Եթէ լաւ էր, ի՞նչ պէտք էր ընէինք ձեռք ձգելու համար: Երբ վատ էր, ուրեմն ճիշդ դուրս եկած է, որ Հայաստանով չանցնիր: Սակայն անով չի վերջանար հարցը: Հարցը կ'ըլլայ այն, որ երբոր ուրիշը ունի այդ նաւթամուղը, ասիկա կը փոխէ աշխարհի այդ մասի քաղաքականութիւնը եւ ապագան: Մենք կը փորձենք թերագնահատել այդ նաւթամուղը, բայց ան ռազմավարական արժէք ունեցող է եւ այդ արժէքը ուրիշներու համար է, ուրեմն մեզի դէմ է: Մենք ոչ միայն չենք օգտուիր, այլ ուրիշները այդ նաւթամուղով տարբեր բանի կը վերածուին: Պիտի տեսնել, թէ Ազրպէյճանը ուր կը հասնի: Պէտք է երեւակայել, որ 5 կամ 10 տարիէն ու՞ր կը



հասնի Ագրպէյճանը, եթէ այս ձեւով երթայ, եւ ու՞ր կը հասնինք մենք, եթէ այս ձեւով երթանք: Հարցումիդ պատասխանը պարզապէս այն է, որ մտահոգուելու տեղ կայ, մենք արդեօ՞ք բան մը սորված ենք այդ պատմութենէն, թե ոչ:

**-Վերադառնալով անհատի դերին, կ' ուզեմ նշել, որ 1909-1910 թուականներուն Մահաթմա Կանտի կ' ըսէ, թէ ազգի մը ազատագրումը օտարի լուծէն, այսինքն՝ արտաքին ազդակներէ, կը սկսի անհատին ներքին ազատագրումով, այսինքն՝ ձերբազատուելով նախապաշարումներէ եւ այլն: Այս ուղղութեամբ կ' ուզեմ վերադառնալ քիչ առաջ նշած «Մասիս» շաբաթաթերթի իմ յօդուածի մէկ այլ հարցումին, ուր կ' ըսեմ.**

**«Համայնավարութեան անկումը է նաեւ անկումը այն բոլոր կազմակերպութեանց եւ գաղափարաբանութեանց, որոնք կը փորձեն սեփականացնել ժողովուրդի մը պատմութիւնը եւ իրենք զիրենք կը ներկայացնեն որպէս այդ ժողովուրդի «ոգին» ու «աստուածացումը», իրենցմէ դուրս չի ճանչնալով ուրիշը:**

**Ժամանակը եկած չէ՞, որ ձերբազատուինք այսպիսի կապանքներէ ու գործենք որպէս ազատ մտածողութեան տէր անձեր, հրապարակաւ հարցուփորձելով այն ամէնը, որ առնչութիւն ունին մեր ճակատագրին հետ»:**

**Ձեր կարծիքը կ' ուզեի իմանալ այս մասին:**

-Շատ պարզ է: Մեր մօտ, ճիշդ այն պատճառներով, որ ըսիր, եւ քիչ առաջ ալ տարբեր ձեւով մտաւորապէս նոյն բանը եւ ըսի, մեր մօտ կը պակսի ինքնաքննադատութիւնը, այսինքն՝ իւրաքանչիւր կազմակերպութիւն, կուսակցութիւն, կը մտածէ, որ եթէ ինք իր անցեալին նայի եւ իր նկատմամբ քննադատական մօտեցում տայ, ինք կը տկարանայ: Եւ ինքը պէտք չէ տկարանայ, որովհետեւ իրմով է, որ հայութիւնը կը շարունակուի: Որքան ատեն, որ այդպէս կը մտածենք, մենք չենք ունենար քննական մօտեցում, եւ չենք ձերբազատուիր այն տարազներէն, որոնցմով ճիշդ կամ սխալ մեծցած ենք եւ կը մնանք նոյնը: Ուրեմն պատմութեան կը նայինք՝ հոն հաստատելու համար մեր հաւատացածը եւ ոչ թէ նոր բան սորվելու. միւս կուսակցութիւնը կը տեսնենք որպէս այն մարդը, որուն պէտք է ատել, որպէս զի եւ գիտնամ թէ ես ո՞վ եմ: Ուրեմն այդ ազատագրութեան հարցը եւ այդ ձեւով կը տեսնեմ, որ մարդ ազատ է, երբ կարող է ըսել՝ գիտե՞ս, այսինչ բանը, որ ես 3 օր առաջ ըրի, կրնայի նաեւ այս ձեւով ընել, երեւի սխալ դատողութիւն էր եւ ընդունիս: Ու տեսնես, որ յաջորդ անգամ, երբ որ նման բան կարող է ըլլալ, նոյն սխալը չընես:

Ես տակաւին չեմ տեսած որեւէ կուսակցութիւն, որ ինք գրէ եւ ըսէ, որ մենք 100 տարի առաջ կամ 20 տարի առաջ այսինչ բանը սխալ ըրինք: Հերոսացման պատմութիւն է, եւ մեր արդէն հաւատացածը եւ գիտցածը կ' ուզենք գտնել մեր պատմութեան մէջ եւ անհանգիստ կը զգանք, եթէ մէկը որեւէ քննադատական մօտեցում ունենայ: Իսկ անոնք, որոնք կը քննադատեն, միւսին կը քննադատեն, իւրաքանչիւրը միւսը կը քննադատէ, ոչ ինքզինքը, ատով միայն հաստատելով

status quo-ն, որ մենք կանք, մենք ենք կարելորը, եւ այդ կարելորութեան մաս կը կազմէ ուրիշին չընդունիլը:

**-Կ' ուզեմ ձեր կարծիքը իմանալ Փանթուրքիզմի վտանգին մասին: Մարդիկ կան, որ տակաւին կը խորհին, թէ աստիկա մեծ վտանգ մըն է մեր ժողովուրդին համար: Դուք կը տեսնէ՞ք այդ վտանգը եւ չէ՞ք խորհիր, որ երբ այդ մեծ վտանգը առաջնահերթութիւն կը դարձնենք, ձեռով մը սահմանափակած կ' ըլլանք մեր ազատութիւնը, ազատ շարժելու եւ այլընտրանքներ ունենալու մեր կարողութիւնները:**

-Ես այսօր չեմ ըսեր, թէ նման վտանգ չէ եղած կամ չկայ: Մտայնութիւն կայ, բայց ես չեմ տեսներ, որ այսօր Թուրքիոյ իշխանութիւնները կամ ընդհանրապէս թուրք հասարակութիւնը, կամ Միջին Ասիայի հանրապետութիւնները, կամ Ազրայէճանը իրենց քաղաքականութիւնը կը վարեն ըստ փանթուրքիստական ծրագրումի կամ այդ արժէքներու: Ըսել չէ, որ գոյութիւն չունի ինչ որ արիւնակցութեան զգացում, բայց միեւնոյն ատեն ես չեմ տեսած այս 15 տարիներու ընթացքին: Սկիզբը քիչ մը կար, երբ Սովետը փլուզման ենթարկուեցաւ, կար կարծիք, որ թերեւս կարելի է Թուրքիան գործածել (սա ամերիկեան ծրագիր էր. Թուրքիոյ մէջ ալ կային մարդիկ, որ կ' ըսէին, թէ քանի որ բոլորն ալ ընդհանուր թրքական ծագում ունին, Թուրքիան կարելի է ներկայացնել որպէս մօտելը՝ այդ Միջին Ասիայի հանրապետութիւններու): Սակայն Թուրքիան այդ կարողութիւնը չունեցաւ: Թուրքիան նաեւ ինք իրեն համար ծրագիր է դրած Եւրոմիութեան անդամ դառնալ եւ ես Թուրքիոյ մէջ չեմ տեսներ, ոչ թէ մարդիկ չկան, որոնք չեն հաւատար, Հայաստանի մէջ ալ մարդիկ կան՝ կրակապաշտութեան կը հաւատան, մարդիկ կան, որ ֆաշիստ են, մարդիկ կան, որ թագաւորական են, ըսել չէ, որ Հայաստանը այդպէս է ու մարդիկ ունինք, որ ծովէ ծով Հայաստան կ' ուզեն: Թուրքիան ալ կրնայ ըսել՝ այս ալ հայկական մեծ պետական է եւ մեծ վտանգը է իրենց համար: Բայց ոչ Հայաստանի մէջ կը կարծեմ այդ մտայնութիւնը շատ է եւ ոչ ալ Թուրքիոյ մէջ տիրապետող է: Աստիկա ձեռն մըն է կարծէք խուսափելու դիմագրաւելէ այն իրական հարցերը, որ մեր առջեւ են: Բայց դիտողութիւնդ նաեւ շատ ճիշդ է այն իմաստով որ եթէ որքան ատեն, որ մենք այդ տեսակ վախը կ' ապրինք, այն ատեն մենք կրնանք միայն մէկ ընտրութիւն ունենալ, այն ալ Ռուսաստանի մէկ նահանգը ըլլալն է: Եւ այս կար, չէ՞. անկախութեան շրջանին կային քաղաքական ուժեր որոնք կ' ըսէին, թէ մենք չենք կրնար անկախ ըլլալ, որովհետեւ եթէ անկախ ըլլանք, Թուրքիան կու գայ կը ջարդէ: 15 տարի է դեռ չէ եկած ջարդելու, հիմա չեմ գիտեր՝ նշաններ կա՞ն, որ պիտի գա ջարդելու, թէ ոչ: Դժուարութիւններ ունինք, այո, բայց այնքան ատեն, որ այդ վախը ունինք, պատասխանատուութիւնէ խուսափում է, որովհետեւ ինչպէս ժամանակին իմ մէկ բարձրաստիճան լաւ ընկերոջ ըսի, եթէ փանթուրքիզմի վախը, վտանգը իրական կը տեսնենք, եւ տիրապետող եւ գլխաւորն է, որու հիմա վրայ պիտի որոշենք, ուրեմն ե՞րբ է, որ մենք կրնանք անկախ ըլլալ: Որովհետեւ ես չեմ տեսներ մաթեմատիկական հաւանականութիւնը, որ Թուրքիան շալկէ ինքզինքը, երթայ ուրիշ տեղ, եւ տեղը Իտալիան գայ կամ

Ֆրանսան՝ որպես մեր հարեւանը: Եթէ չկայ, ուրեմն որոշենք, որ անկախ չենք կրնար ըլլալ. կարելի չէ եւ անկախութիւն ուզել եւ ուրիշ վախերով քաղաքականութիւն վարել:

-Կ' ուզեմ ձեր կարծիքը իմանալ երեւոյթի մը մասին, որ բաւական կը մտահոգէ զիս: Օրինակի համար Սահմանադրութիւնը: Մարդիկ, որոնք 1995-ին կ' այսպանէին ու կը սեւցնէին այս Սահմանադրութիւնը, այսօր անով կ' երդնուն: Մարդիկ, որոնք նախկին իշխանութիւնները դաւաճան կ' որակէին, որովհետեւ անոնք Լեոնային Ղարաբաղի անկախութիւնը չէին ճանչնար, այսօր Քոչարեանի իշխանութեան գալէն ի վեր 6-7 տարիներ անցած են եւ տակաւին չի ճանչցուիր, եւ խօսք չկայ այդ մասին: Փոխ-գիջումներու մասին. նախկին իշխանութիւնները դաւաճան էին, ապագային էին՝ այդ մէկը առաջարկած ըլլալուն համար, վերջերս թէ Սերժ Սարգսեան, եւ թէ Քոչարեան կը խօսին այդ մասին, ու ձայն հանողները լռած են: Հարցերը նոյնը մնացած են, բայց մարդիկ իրենց տեսակէտները 180 աստիճան փոխած են: Ի՞նչ կը խորհիք այս մասին:

-Այդ հարցումին պատասխանը հաւանաբար դուն աւելի լաւ գիտես, քան թէ ես, թէ ինչպէ՞ս կը պատահի, որ այդպէս կը փոխուի: Այդ դիտողութիւնները ճիշդ են: Հիմա կարելի է ըսեն, որ քաղաքականութիւն է՝ օր մը կը պաշտպանեմ, օր մը չեմ պաշտպաներ: Ամերիկայի մէջ ալ Հանրապետական կուսակցութիւնը կ' ըսէր, որ պետական պիտճէն բաց պէտք չէ ունենայ: Հիմա կ' ըսեն՝ բացը այդքան կարելոր հարց չէ: Կարելի է այդ ձեւով բացատրել: Բայց խնդիրը այն է, որ Ամերիկայի նման երկիրը իրաւունք ունի այդպէս վարուելու, անսկզբունքային ըլլալու, ամէն օրուայ համաձայն շարժելու: Հայաստանի պէս պետութիւնը կամ հայ ժողովուրդը իրաւունք չունի: Փոքր ժողովուրդները իրաւունք չունին այդպիսի սխալներ գործելու: Որովհետեւ ինչպէս 40 տարիներ առաջ քաղաքական գիտութեան դասի ամերիկացի համալսարանական դասընկերս ըսաւ. երբ որ դուք՝ փոքր ժողովուրդներդ, սխալներ կը գործէք, հետեւանքները դուք կը կրէք: Երբ որ մեզ նման մեծ պետութիւն մը սխալներ կը գործէ, նորէն հետեւանքները դուք կը կրէք: Մենք իրաւունք չունինք այդ խաղերը խաղալու կամ գոնէ աւելի լուրջ խաղեր պէտք է խաղանք: Բայց թէ ինչո՞ւ այդ այդպէս է, մասամբ մը պատճառը թերեւս իշխանութեան մասնակցութեան հարց է, կրնայ ըլլալ նաեւ, որ այնտեղ manipulation կայ, չեմ գիտեր: Բայց յստակ է, որ քաղաքական ուժերը յաճախ ոչ արդարացի պատճառներով դիրքորոշումներ կ' ունենան, որովհետեւ ինչ որ ակնկալութիւններ ունին կամ ինչ որ ձեւով աշխարհը այն չէ, ինչ որ իրենք կ' ուզեն ըլլայ եւ ազատ կը զգան փոխելու: Այդ հարցերը, որ կու տաք, բաւական արդարացի են: Փաստօրէն, եթէ առնենք մեր կուսակցութիւններու պատմութիւնը եւ անոնց դիրքորոշումը Հայաստանի հանրապետութիւններու նկատմամբ, ինչ կը տեսնենք: Առաջին հանրապետութեան Դաշնակցութիւնն էր ղեկավարութիւնը, Ռամկավարները խնդիրներ ունէին: Դաշնակցութիւնը կ' ըսէր թէ՛ ինչ որ ալ ենք, մենք ենք եւ Հայաստանն է, պէտք է մեզի օգնէք: Իսկ երբ երրորդ հանրապետութիւնը եկաւ, ուրիշ էր պատմութիւնը, նոյնիսկ երբ ժողովրդավար

ձեռով նախագահ ընտրուեցաւ 91-ին, եւ այդ ընտրութեան վերաբերեալ ոչ մէկ հարց կար, նորէն չընդունեցին որոշ ուժեր, որովհետեւ այդ որովհետեւ-ները իրենք պէտք է հաշիւ տան: Ես թերեւս 30 տարիներ յետոյ ժամանակ ունենամ, այդ հարցերով կը զբաղիմ: Հիմա ուրիշ գիրքեր ունիմ գրելու:

**-Ղարաբաղեան հարցը: Ասկէ 6-7 տարիներ առաջ ու՞ր էինք, հիմա ու՞ր ենք: Յառաջխաղացք կա յ:**

-Ոչ, բայց եւ այնպէս մէկ կողմէ յառաջխաղացք կայ, քանի որ Ղարաբաղի կառոյցները նոր են ու յառաջացած են: Սակայն կը կարծեմ, որ հարցի լուծման վերաբերեալ յետընթաց կայ, ոչ թէ յառաջխաղացք, որովհետեւ եթէ մինչեւ 2-3 տարի առաջ բանակցութիւններ կային, թէեւ յաջողութիւն չէր, բայց մտաւորապէս կողմերը գիտէին, թէ ինչի՞ վրայ համաձայն չեն: Այսօր արդէն չկայ բանակցութեան հիմք: Այսինքն, Ազրպէյճանը կ'ըսէ՝ մենք պատրաստ ենք բանակցելու, եւ միակ ձեւը, որ կը տեսնենք բանակցութեան որպէս հիմք, քայլ առ քայլ մօտեցման ընդունիլն է: Առ այժմ թողնենք statusի հարցը, որ յետոյ կրնանք որոշել: Այս մէկը բաւական մօտ է սեպտեմբեր 97-ի մօտեցման: Իսկ հայկական կողմը կ'ըսէ, թէ նման մօտեցում ընդունելի չէ, միակ մօտեցումը այն հիմքն է, որու վրայ խօսած էին Քոչարեան եւ Հէյտար Ալիեւ, որը ընդհանուր առմամբ կարելի է բնորոշել որպէս տարածքներու փոխանակութեան սկզբունք: Որը չգործեց եւ չէր կրնար գործել: Ուրեմն բանակցութեան հիմք չկայ, որովհետեւ լրիւ տարբեր մօտեցումներ կան: Եւ սա, իմ կարծիքով, լաւ չէ: Երրորդ կէտը, որ իմ կարծիքով լաւ չէ, տնտեսական վիճակն է: Մեր տնտեսութիւնը մի քանի տոկոսով կրնայ ըլլալ, որ լաւացած է, բայց հիմնականին մէջ չեմ կարծեր՝ ունեցած է որակական այն փոփոխութիւնը, որ ըսել տար, որ մեր ժողովուրդը աւելի լաւ վիճակի մէջ է: Այդ չէ եղած, եւ չեմ տեսներ ինչպէս պիտի ըլլայ: Ընդհանրապէս ներդրումները կարելի է Գրգորեանի տուած գումարով եւ կամ ուրիշ ձեւերով բարձր ցոյց տալ, բայց ես չեմ համոզուած, որ տնտեսութիւնը որակական փոփոխութիւն կրած է: Աւելի կարելոր հարցը թերեւս այն է, որ Ազրպէյճանը ինք կը փոխուի, կ'ուժեղանայ կառուցային, բանակային, ֆինանսական ձեւով, եւ ասոր մէջ կայ նաեւ այն կէտը, որ 90-ական թուականներու սերունդը հայերը կը ճանչնար: Հայերը կ'ապրէին Ազրպէյճանի մէջ, ազրպէյճանցիները կ'ապրէին Ղարաբաղի եւ Հայաստանի մէջ: Իրենց համար հայութիւնը իրական մարդիկ էին: Բայց նոր սերունդը չի ճանչնար հայերուն: Իրար չենք ճանչնար՝ որպէս ժողովուրդներ արդէն, չենք յիշեր: Եւ ասոր հետեւանքը այն է, որ երբ նաեւ հարցը չէ լուծուած, ազերի ժողովուրդի մէջ արդէն ատելութիւն սկսած է հայ ժողովուրդի նկատմամբ, որը վտանգաւոր է մեզ համար որպէս հարեւան: Ազրպէյճանական բոլոր ուժերը հիմա ընդհանուր մօտեցում մը ունին, որ է՝ եթէ Հէյտար Ալիեւը, որը պատրաստ էր շատ զիջումներ ընելու, որոնց մենք պարտաւոր չէինք, չկրցաւ լեզու գտնել հայերու հետ, ուրեմն հայերը պատրաստ չեն որեւէ լուծման: Հետեւաբար, մենք պէտք է մտածենք պատերազմի ճամբով երթալ: Եւ սկսած է որոշ տեսակի հայրենասիրութիւն, իրաւունքներու

պաշտպանութեան հարց, որը չկար նոյնիսկ 5 տարի առաջ: Կը հասկնա՞ք. abstraction-ի կը վերածուինք մենք եւ իրենց խօսքերով՝ ինչպէս որ դուք հայերդ թուրքերը կ'ատէք, մենք ալ ձեզ կ'ատենք հիմա: Որը մտայնութեան հարց է եւ շատ աւելի կը դժուարացնէ կացութիւնը: Մենք պատրա՞ստ ենք երկու թշնամի ժողովուրդներ ունենալու: Ես կը կարծեմ, որ մեր հաշուարկները ամէն գործօն նկատի պիտի ունենան: Եւ՛ կարելի է փանթուրքիզմի նորէն մէջտեղ գալը, եւ՛ այս եւ՛ այն, բայց միեւնոյն ատեն մենք մեր հարցերը պէտք է կարողանանք լուծել: Եթէ մենք չի լուծենք, ուրիշը պիտի լուծէ:

**-Շատ շնորհակալ ենք ձեզմէ, որ կրցաք ժամանակ ստեղծել այս հարցազրոյցին համար: Յոյժ կը գնահատենք այն աշխատանքը, որ դուք կը տանիք, որը շատ կարեւոր է մեր ներկայ հանգրուանին համար: Ձեզի քաջառողջութիւն կը մաղթենք եւ յաւելեալ աշխուժ գործունէութիւն:**

-Շնորհակալ եմ:

8 հունուար, 2005 թ., «Մասիս», Հարցազրոյցը՝ Յարութ Տէր Դավիթեանի